

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ 2017**

*Ը ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ Ս. ԽԱՉԻ /ԹԻԻ 31  
ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ*

**SUNDAY, November 5, 2017**

**8<sup>th</sup> SUNDAY AFTER THE FEAST OF THE HOLY  
CROSS/ N0 / 31**

### TODAY'S BIBLE READINGS

**Ephesians 1:1-14 / Luke 8:17-21 /**

**Պատարագիչ՝**

**ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՂՆՅ. ՔԵՐԿԱՆՃԵԱՆ**

*Հոգևոր Հովիվ*

**Celebrant:**

**REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN**

**Pastor**

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**


**Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian**

**Choirmaster: Miss Lori Antounian**

**Organist: Mr. Karen Manucharyan**


615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)



# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ԵՓԵՍԱՍՑԻՆԵՐ 1.1-14

**1-**Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. **2-**շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Դօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

**3-**Օրհնեա՛լ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով՝ երկնային վայրերու մէջ, **4-**ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: **5-**Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, **6-**որպէսզի գովարանենք իր շնորհքին փառքը. անո՛վ ընդունելի դարձուց մեզ՝ Սիրելիին միջոցով: **7-**Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. **8-**անո՛վ ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: **9-**Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. **10-**որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Քրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: **11-**Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անո՛ր՝ որ կը ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, **12-**որպէսզի մենք՝ նախապէս Քրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: **13-**Դո՛ւր ար ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Հոգիով, **14-**որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար:

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.17-21

**17**Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չգիտցուի ու երեւան չելլէ: **18**Ուրեմն զգուշացէ՛ք թէ ի՛նչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի առնուի նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»: **19**Անոր մայրն ու եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար մօտենալ իրեն: **20**Անոր լուր տուին՝ ըսելով. «Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայնած են եւ կ'ուզեն տեսնել քեզ»: **21**Ան ալ պատասխանեց անոնց. «Իմ մայրս ու եղբայրներս անո՛նք են, որ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

## Ephesians 1.1-14

**1** Paul, an apostle of Jesus Christ by the will of God, to the saints which are at Ephesus, and to the faithful in Christ Jesus: **2** Grace be to you, and peace, from God our Father, and from the Lord Jesus Christ. **3** Blessed be the God and Father of our Lord Jesus Christ, who had blessed us with all spiritual blessings in heavenly places in Christ: **4** According as he had chosen us in him before the foundation of the world, that we should be holy and without blame before him in love: **5** Having predestinated us unto the adoption of children by Jesus Christ to himself, according to the good pleasure of his will, **6** To the praise of the glory of his grace, wherein he hath made us accepted in the beloved. **7** In whom we have redemption through his blood, the forgiveness of sins, according to the riches of his grace; **8** Wherein he had abounded toward us in all wisdom and prudence; **9** Having made known unto us the mystery of his will, according to his good pleasure which he hath purposed in himself: **10** That in the dispensation of the fulness of times he might gather together in one all things in Christ, both which are in heaven, and which are on earth; even in him: **11** In whom also we have obtained an inheritance, being predestinated according to the purpose of him who worked all things after the counsel of his own will: **12** That we should be to the praise of his glory, who first trusted in Christ. **13** In whom ye also trusted, after that ye heard the word of truth, the gospel of your salvation: in whom also after that ye believed, ye were sealed with that holy Spirit of promise, **14** Which is the earnest of our inheritance until the redemption of the purchased possession, unto the praise of his glory.

## Luke 8.17-21

<sup>17</sup> For nothing is secret, that shall not be made manifest; neither any thing hid, that shall not be known and come abroad. <sup>18</sup> Take heed therefore how ye hear: for whosoever hath, to him shall be given; and whosoever hath not, from him shall be taken even that which he seemeth to have. <sup>19</sup> Then came to him his mother and his brethren, and could not come at him for the press. <sup>20</sup> And it was told him by certain which said, Thy mother and thy brethren stand without, desiring to see thee. <sup>21</sup> And he answered and said unto them, My mother and my brethren are these which hear the word of God, and do it.



### SOAP Bible Study Method

**S**cripture: Write out one verse that was meaningful to you.

**O**bservation: What was interesting in this passage? What did you learn? What was God saying to you?

**A**pplication: How can you apply this Scripture to your life? How will you let it change you?

**P**rayer: Respond to God in prayer, use the Scripture as a guide. Ask God to help you meditate and apply the Scripture to your life.



# Սրբոց Կեանքերը լաւագոյն միջոցներէն են հոգեւոր կեանք մշակելու համար



**Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ  
օրացոյցին համաձայն այս Շաբաթ օրը  
«Տօն Ամենայն Սրբոց` Հնոց եւ Նորոց Յայտից եւ  
Անյայտից» Տօնակատարութիւնն է:**

Եկեղեցին մեզ կը կանչէ իր սուրբերուն մասին մտածելու, Անոնց կեանքին մասին կարդալու, միսթիք կապի մէջ մտնալու Անոնց հետ եւ վերջապէս իրենց կատարած գործերուն հետեւելու: Սուրբ բառը ո՛չ միայն կը գործածուի Աստուծոյ համար, Ս. Երրորդութեան իւրաքանչիւր դէմքին համար, հրեշտակներուն եւ Աստուծոյ երկրաւոր ծառաներուն համար, այլ նաեւ` բոլոր քրիստոնէաներուն համար անխտիր: Պօղոս Առաքեալ իր նամակները կը դրկէ «Կոչեցելոց Սրբոց», որոնք կը բնակին Հռոմի կամ Կորնթոսի մէջ:

Ամէն օր կամ պարբերաբար Սուրբի մը կեանքի ընթերցումը կ'օգնէ մեզի մեր կապը ամուր պահելու նախ Աստուածաշունչին հետ, որ մեր փրկութեան ուղեցոյցն է եւ ուրկէ կու գան առաջին եւ մեծագոյն սուրբերը, ապա` համայն քրիստոնէութեան հետ, որուն անբաժան մէկ մասն է մեր մայրենի Եկեղեցին, ու վերջապէս` մեր պատմութեան եւ մեր հոգեւոր ժառանգութեան հետ, որոնց միջոցաւ անոնք կերտած, գրած եւ իբրեւ ժառանք ձգած են մեզի:

Պատմութիւնը լաւագոյն ուսուցիչն է՝ սորվիլ ուզողին համար որովհետեւ օրինակով կը սորվեցնէ: Եկեղեցոյ Վարդապետութիւնը կը խօսի մեզ «Սրբոց վարքերը» լաւագոյն սիւթերն են ընթերցումի եւ լաւագոյն կերպը՝ ուսուցումի, որովհետեւ այստեղ ո՛չ թէ վերացական առաքինութեան մը մասին խորհրդածութիւններ կ'ըլլան, այլ առաքինութիւններ իրենց իրականացած ձեւին մէջ կը պատկերացուին մեզի. Օրինակ՝ «կրօնաւորութիւնը, քաջութիւնը, բարեպաշտութիւնը եւ ծառայելու բնական տրամադրութիւնը իր նմաներուն, բայց ամենէն աւելի Աստուծոյ եւ ընկեր արարածի սերը»:

Միւս կողմէ՝ Սուրբերը կու գան կեանքի բոլոր ասպարեզներէն՝ խոնարհագոյնէն մինչեւ բարձրագոյնը, կաթողիկոսներէն մինչեւ յետին կրօնաւորը, թագաւորէն մինչեւ պետական բոլոր պաշտօնատարները: Անոնց մէջ կան այրեր եւ կիներ, երիտասարդներ եւ ծերեր, մինչեւ անգամ մանուկներ, հարուստներ ու աղքատներ, մտաւորականներ ու գեղջուկ մարդեր: Հետեւաբար անոնց կեանքերը կիրարկելի կրնան ըլլալ ամէն մարդու համար անխտիր: Ասոնք մեզի համար քաջալերութիւն եւ ուղեցոյցներ են կեանքի ամէն տեսակ կացութեանց դիմաց: Սուրբերը անայլայլ կերպով կը թելադրեն մեզի, իրենց կեանքով ու խօսքով, որ միշտ եւ անսայթաք Աստուծոյ եւ Արդարութեան կողմը կենանք՝ հակառակ ամէն բանի եւ ի գին ամէն զոհողութեան: Միշտ Սրբութեան ու քաջութեան ձգտինք, միշտ պատրաստ ըլլանք փոքր, աշխարհիկ, գռեհիկ ու ժամանակաւոր բաներ զոհել՝ մեծագոյն, հոգեւոր, ազնիւ ու յաւիտենական բարիքներուն համար: Մեզի տրուած այս երկրաւոր կեանքը այնպէս մը գործածենք, այնպէս մը արժեւորենք, որ շահինք ու ժառանգենք յաւիտենական երանական կեանքը, ինչպէս «Սուրբերը ըրին. Որք զչարսն պարտեցին, նեղութեանց համբերեցին, լուսեղէն եւ երկրային անթառամ պսակացն արժանի եղեն»:

**Ուրեմն սիրելի հաւատացեալներ՝**

Մենք Զրիստոնէաներս, ըստ Առաքելական հաւաստումին, «Ազգ ենք ընտիր, Ազգ Սուրբ եւ ժողովուրդ սեպհական Աստուծոյ, ընտրուած՝ յայտարարելու սքանչելիքները Աստուծոյ, որ կանչեց մեզ ամենքս խաւարէն իր սքանչելի լոյսին: Կար ժամանակ, որ մենք Աստուծոյ ժողովուրդը չէինք, սակայն հիմա ենք: Կար ատեն մը, որ Աստուծոյ ողորմութիւնը չէինք ճանչցած, սակայն այժմ արժանացած ենք Աստուծոյ ողորմութեան» (Ա. Պետ. Բ 9-10):

**Սիրելիներ՝**

**Կեանքի նպատակներէն մէկ հատը ուտել, խմել, մեծնալ եւ նիւթական ապահովութիւն ձեռք բերելն է: Իսկ երկրորդ կեանքի նպատակը մեր հոգեւոր ժառանգութեան բարձր արժէքները մեզ համար էական եւ կարեւոր ըլլալն է: Ճանչնալ, ծանօթանալ, մեր գնահատելն է ու մեր իւրացնելն է այդ ժառանգութիւնը, ինչ որ կրնայ լրջացնել մեզ եւ աւելի ամուր հիմքերու վրայ դնել անհատական ու հաւաքական կեանքը:**

**Մենք որպէս անոնց ժառանգորդները (Սուրբերու, մեր պարագային Յայագգի սուրբերու) մեր հոգեւոր մշակոյթը ապրողները, կենդանի պահողները, պաշտպանները եւ յաջորդ սերունդներուն փոխանցողները ըլլանք:**

**Սուրբերուն բարեխօսութիւնը մեր բոլորիս վրայ ըլլայ ամէն:**

***S. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան***




# Տօներ

2 Նոյեմբեր 2017

## ՅԻՇԱՏԱԿ Ս. ՅՈՎՆԱՆ

## ՈՍԿԵՔԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ս.Յովհան Ոսկեբերան Հայրապետը եկեղեցւոյ ամենանշանաւոր ու շնորհալի հայրերէն է: Ան ծնած է 347 թուականին Անտիոքի մէջ: Իր հիմնական ուսումը ստացած է Անտիոքի աստուածաբանական դպրոցին մէջ, եւ ճարտասանութեան մէջ հմտացած Լիբանիոսի դպրոցին մէջ: Ան դեր երիտասարդ ինքզինք նուիրած է ճգնողական կեանքի: 381 թուականին Մելետիոս Անտիոքացիի կողմէ ձեռնադրուած է սարկաւազ, իսկ 386 թուականին Փլաբիանոսի կողմէ՝ քահանայ: Այս ընթացքին սքանչելի ու պերճախօս քարոզներուն շնորհիւ արժանացած է «Ոսկեբերան» տիտղոսին: 398 թուականին, հակառակ իր կամքին, ընտրուած է Կ. Պոլսոյ պատրիարք եւ եռանդով ու նախանձախնդրութեամբ կը ձեռնարկէ մայրաքաղաքի բարեկարգման աշխատանքին, որ հետզհետէ հեռացած էր քրիստոնէական կենցաղէն եւ կ'ապրէր անբարոյ ու վեճերով լեցուն կեանք: Ապականութիւնն ու կրօնական անտարբերութիւնը բոյն դրած էին թէ՛ հասարակ ժողովուրդի, թէ՛ արքունիքի ու թէ՛ հոգեւորականութեան մէջ: Իսկ Ոսկեբերանը կը կշտամբէր ամէն տեսակ անբարոյականութիւն, այդ պատճառով ալ իր վրայ հրաւիրած էր Եվդոքսիա կայսրուհիին զայրոյթը: Սուրբ Հայրապետի դէմ դուրս կու գայ նաեւ Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը, որ կը ձգտէր Կ. Պոլսոյ պատրիարք դառնալ: 403 թուականին եկեղեցական ժողովին կողմէ 29 անհիմն ամբաստանութիւններով, աքսորման հրաման կը տրուի, սակայն աքսոր մեկնելու գիշերը այնպիսի ահաւոր երկրաշարժ ու հրդեհներ կ'ըլլան, որ կայսրուհին ետ կը կանչէ անոր իր աթոռին:






Յովհան Ոսկեբերանը կը շարունակէ նոյն խստութեամբ քննադատել արքունական գեիութիւնները: Հակառակ ժողովուրդի համակրանքին եւ Արեւմտեան եկեղեցւոյ պաշտպանութեան՝ Արկադիոս կայսրն ու Եվդոքսիա կայսրուհին կրկին անոր արքայութիւնը հրաման կ'արձակեն: Սուրբ Հայրապետը կ'արքայութիւնը Պոնտոս եւ կը նահատակուի 407 թուականին, Կոմանա քաղաքին մէջ: Անոր արտասանած վերջին բառերն են. «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, ամէն ինչի համար փառք քեզ»: 438 թուականին, սուրբին մարմինը մեծ հանդիսաւորութեամբ կը բերեն եւ կ'ամփոփեն Կ. Պոլսոյ Ս. Առաքելոց եկեղեցւոյ մէջ: Բազմաճանր է անոր մատենագրական վաստակը՝ մեկնութիւններ, ճառեր, ներբողներ, թուղթեր եւայլն, որոնք իրենց բարերար ազդեցութիւնը թողած են քրիստոնէական միտքի պատմութեան վրայ: Անոր գործերը Հայերէն թարգմանուած են իր կենդանութեան ժամանակ:



## Holidays

### November 02, 2017 Commemoration of the Pontiff St. John the Chrysostom

The Pontiff St. John the Chrysostom is one of the most prominent and gracious Fathers of the Universal Church. He was born in Antioch, in 347 AD. He has studied in the Theological School of Antioch and has advanced his skills in rhetoric art in the School of Libanios. Since the young age he has led an ascetic life. In 381 AD he has been ordained as deacon by Meletios of Antioch and in 386 he has been ordained as priest by Flavianos. Thanks to his brilliant and eloquent speeches and sermons he has deserved the title “Chrysostom”.



In 398 AD he is elected the Patriarch of Constantinople against his will and zealously initiates renovation and reconstruction works of the capital city, which was far from the Christian mode of life and lived immoral life full of conflicts and disputes. Amorality and religious indifference were dominant among the people, the court and the clergy. St. John the Chrysostom condemns and criticizes all forms and manifestations of amorality and for criticism he raises the Queen Eudoxia's anger. The Patriarch Theophilus of Alexandria also, who wished to become the Patriarch of Constantinople, also stands against St. John the Chrysostom. Basing on groundless slander and calumny by the ecclesiastical council held in 403 AD., an order is issued to exile the saint. However, during the night of exile such terrible earthquake and fires happen that the Queen calls the Patriarch back to his residence. St. John the Chrysostom continues to criticize the wrong and immoral mode of life of the court. Ignoring the people's sympathy towards the Patriarch and the protection of the Western Church, the King Arkadios and the Queen Eudoxia again issue an order to exile the saint. The saint is exiled to Pontos and is martyred in the town Komana. His last words are: "Glory to You, God, glory to You, glory to You to for everything." The saint's remains are buried in the Church of St. Apostles, of Constantinople, in 438 AD.

St. John the Chrysostom is the author of many interpretations, speeches, odes, epistles and letters, which have positively influenced on the history of the Christian mind. His works have been translated into Armenian still during his life.



4 Նոյեմբեր 2017

## **Տօն բոլոր սուրբերու՝ հիներու եւ նորերու, յայտնիներու եւ անյայտներու**

Հայ Եկեղեցին այս տօնով կը  
նշէ բոլոր այն սուրբերու  
յիշատակը, որոնց անունները  
անցած չեն Տօնացոյցի կամ  
Եկեղեցական օրացոյցի մէջ,  
սակայն անոնց սուրբ

անունները գրուած են Երկինքի արքայութեան սրբազան մատեանին մէջ:  
Քրիստոնէական հալածանքներու եւ հաւատքի համար մղուած բազում  
պատերազմներու ժամանակ շատերը նահատակուած են, որոնց անունները,  
ցաւօք, չեն պահպանուած եւ հասած մեզի:

Ուստի, Եկեղեցին հաստատած է այս նուիրական տօնը գոնէ անոնց  
յիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արիւնը  
հեղեղեցին յանուն Քրիստոսի եւ Ասոր խորհրդաւոր մարմինին՝  
Եկեղեցւոյ շինութեան:

2017-11-04

## **Feast of All Saints - the old and the new, the known and the unknown**

By this feast the Armenian Apostolic Church commemorates the memory of all those saints, whose names are not included in the Church Calendar, but whose names are registered in the sacred book of the Heavenly Kingdom.

Many people have been subjected to severe torments and have been martyred during the wars for the sake of faith. Unfortunately, we do not know their names. So, the Church has established this feast in the Church Calendar in order to commemorate their memory. They are persons who shed their blood for the sake of Christ and His Church.





# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ

## ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱԿԵՐ

Սիրելի հաւատացեալներ,

Այս գրութեամբ հաճոյքն ունինք հրաւիրելու Ձեզի Եկեղեցւոյս Գնման եւ Օծման 47-րդ տարեդարձին նուիրուած հանդիսաւոր Ս. Պատարագին եւ ճաշկերոյթին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017-ին: Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին: Օրուան պատարագիչն է Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան: Ս. Պատարագի աւարտին կը կատարուի Հոգեհանգստեան պաշտօն Եկեղեցւոյս հանգուցեալ անդամներու, բարերարներու, ինչպէս նաեւ՝ Եկեղեցւոյս մէջ իրենց ծառայութիւնը մատուցած հաւատացեալներու հոգիներուն ի հանգիստ:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր ճաշկերոյթ եւ գեղարուեստական յայտագիր:  
Սիրելիներ,

Կը խնդրենք Ձեր ներկայութիւնը հաստատել հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

Հոգեւոր Հովիւ  
Եւ Ծխական Խորհուրդ







# ԳԼՄԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 47-րդ ՏԱՐԵԴԱՐՁ

## Յայտարարու թիւն

Ձեր ուշադրութեան կը փափաքինք յանձնել թէ՛ այս տարի եւս հանդիսաւոր կերպով պիտի նշուի Եկեղեցոյ Գնման եւ Օծման 47-րդ տարեդարձը, որուն խորհրդաւոր պատմագրական անցեալը արժանաւորապէս նշելու եւ Եկեղեցոյ պատմագրութեան շարժառիթը առաւել եւս շինիչ դարձնելու նպատակով հարկ նկատեցինք ունենալ հովանաւորող նուիրեալ կնքահայրեր, որոնք հանգամանօրէն հանդիսութեան ընթացքին կատարելու կարկանդակի պաշտօնական հատումը:

Առ այդ կոչ կ'ուղղենք մեր սիրելի հաւատացեալներուն եւ յանուն Եկեղեցոյ ընդմիջտ նուիրեալ անձնաւորութիւններուն, եթէ կը փափաքին այս յիշատակելի օրուան մաս կազմել ստանձնելով այս կարեւոր պաշտօնը, կը խնդրենք կապ հաստատել Տ. Եղիա Ա. Քերվանճեանին (514) 241-9347 կամ Եկեղեցոյ քարտուղարութեան հետ

(514) 279-3066:

Շնորհակալութիւն Ձեր համագործակցութեան համար:

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ







Սիրելի հաւատացեալներ,  
 Անոնք որոնք կը փափաքին, որ  
 Հոգեւոր հովիւը այցելութիւն  
 կատարէ իրենց հիւանդ  
 ընտանեկան պարագաներուն կամ  
 հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւր՝



Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան պատրաստէ  
 անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու  
 ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ  
 հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ  
 Եկեղեցոյ գրասենեակ  
 (514) 279-3066

**FAMILY PRAYER**

*God made us a family  
 We need one another  
 We love one another  
 We forgive one another  
 We work together  
 We play together  
 We worship together  
 Together we use God's word  
 Together we grow in Christ  
 Together we love all men  
 Together we serve our God  
 Together we hope for Heaven  
 These are our hopes and ideals  
 Help us to attain them,  
 O God, Through Jesus Christ  
 our Lord*

800-036

Dear Parishioners,  
 If you have family members or relatives that you wish to have spiritual support, our Pastor Arch. Fr. Yeghia Kervanjan is ready to fulfill your wish and visit them, when and where is needed.



Please feel free to contact Der Yeghia directly at (514) 241-9347 or call the secretariat of the Church at (514) 279-3066



## ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրինեք փափաքող  
հաւատացեալները  
կրնան հեռաձայնել Տ. Եղիա Ա. Քհնյ.  
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



# Աստուածաշունչի Սերտողութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկէ՛ք միացէք մեզի  
ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը  
7:00-ին, մասնակից ըլլալու մեր  
հետաքրքրական Աստուածաշունչի  
Նիւթերուն եւ ընկերային  
միջավայրին:



Աստուածաշունչի սերտողութեան  
խումբը՝ ընկերային ջերմ  
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ  
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զհնյ.  
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն  
պատրաստած  
Աստուածաշնչական նիւթերու  
հետաքրքրական ճիւղ  
գիտելիքներով:







**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,  
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,  
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ  
քարտուղարութեան (514) 279-3066, մեր  
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար  
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:  
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

***Հովիւ եւ Ծխական Խորհուրդ***



**Attention to our beloved parishioners,  
If you have changes in your address, e-mail or phone numbers  
please feel free to convey your new data to the Church office at  
(514) 279-3066, to maintain our communication in a regular,  
continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**

***Pastor and Parish Council***



## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

### Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

### ՔՐԻՍԹՕՏԸՐ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով  
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն  
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,  
որ փոքրիկն **ՔՐԻՍԹՕՏԸՐ ՏԷՄԻՐՃԵԱՆԸ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ  
Աստուածային Օրհնութեան  
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



## **CONGRATUALTIONS ON THE BAPTISMAL CEREMONY**

The Pastor & the Parish Council  
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral  
On the Baptismal ceremony  
of the child

### **CHRISTOPHER DEMIRDJIAN**

Extend their heartfelt congratulations  
to the child parents & family.





# ՆՈՒՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral  
of Montreal*

*Donations of October/November 2017  
have been received with great appreciation*



## ANNUAL BAZAAR:

Dr. & Mrs. Arto & Sona Demirjian \$1000,  
Mr. & Mrs. Suren & Natya Sirinian \$50,  
Miss Shoushan Aroyan \$20.

## BAZAAR HOKENAKISD:

### THE LATE IMASDUHI NIGOGOSIAN

Mr. Vrej Nigogosian \$1000.

### THE LATE TAKVORIAN FAMILY

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100.

### THE LATE ROSE TATIGIAN

Mr. & Mrs. Sevan Tatigian \$100.

### THE LATE HAYGANUS GERIKYAN

Mr. & Mrs. Ara Gerikyan \$100.

## GENERAL CHURCH:

Mr. & Mrs. Garo & Michelle Boghosian \$100.

## HOKEHANKISD:

### THE LATE AZIRIAN, AVEDISSIAN, YALENEZIAN, & AVEDIKIAN FAMILIES

Mrs. Lena Laffe \$55, Mrs. Ritza Avedissian \$30.



## Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017  
Համերգ Լին Անոյշ Իշնար – Կիրակի, 26 Նոյեմբեր 2017 երեկոյեան  
ժամը 6-ին Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ  
Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017  
Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –  
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

### UPCOMING EVENTS

Annual Bazaar – Saturday & Sunday- October 28 & 29,  
2017

Concert Lynn Anoush Isnar – Sunday, November 26, 2017  
at 6:00 pm in St-Gregory the Illuminator Armenian  
Cathedral

Children's Christmas /CFFA –  
Sunday, December 3<sup>rd</sup>, 2017

Church 47<sup>th</sup> Anniversary – Sunday, December 10<sup>th</sup>, 2017





*Thank  
You!*

## **ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ**

**Մոնթրեալի Ա. Գրիգոր  
Լուսաւորիչ**

**Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Տարեկան Պազարին Առթիւ**

**Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը իր սրտագին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը կը յայտնէ Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին, Օժանդակ Տիկիներուն, սուհրատուններուն, առեւտրական հաստատութիւններուն, եւ բոլոր անոնց, որոնք նիւթապէս, բարոյապէս եւ անձնուիրաբար նպաստեցին Պազարի կազմակերպման աշխատանքներուն, որոնց շնորհիւ պազարը արձանագրեց իր բացառիկ յաջողութիւնը, զոյգ օրերու ընթացքին՝ Շաբաթ, 28 Հոկտեմբեր եւ Կիրակի, 29 Հոկտեմբեր 2017-ին:**

**Մեր յատուկ շնորհակալութիւնը նաեւ՝ Տօքթ. եւ Տիկին Արթօ եւ Սօնա ՏԷմիրճեաններուն, որոնք սիրայօժար կերպով ստանձնեցին մեր այս տարուայ Պազարին Պատուոյ նախագահութիւնը:**

**Յարգանքով՝  
Հոգեւոր Հովիւ  
եւ Ծխական Խորհուրդ**



# ՏԱՐԵԿԱՆ ՊԱՉԱՐ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Շաբաթ, 28 եւ Կիրակի 29  
Հոկտեմբեր 2017-ին, տեղի  
ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Առաջնորդանիստ Եկեղեցւոյ



Տարեկան Պազարը «Մարի  
Մանուկեան» սրահին մէջ: Չոյգ  
օրերուն Պազարը ընթացաւ բացառիկ  
յաջողութեամբ, որ իսկապէս  
արժեւորեց Եկեղեցւոյ Տիկնանց  
Յանձնախումբին, օժանդակ եւ  
համակիր բոլոր տիկիններուն  
երկարատեւ աշխոյժ աշխատանքը,  
գլխաւորութեամբ Տիկնանց

**Յանձնախումբի Ատենապետուհի՝ Տիկին Չուարթ Թագլորեանին:**

Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2017-ի  
առաւօտեան ժամը 10-ին, տեղի  
ունեցաւ Տարեկան Պազարի  
հանդիսաւոր բացումը:  
Ատենապետուհի՝ Տիկին Չուարթ  
Թագլորեան իր գնահատանքի  
խօսքէն ետք, հրահրեց Արժ. Տ. Եղիա  
Ա. Քինյ. Քերվանճեան, որ կատարե  
բացման աղօթքն ու օրհնութիւնը:  
Ապա, Տեր Հայրը ներկայացուց օրուան  
Պատուոյ Հիւրերը՝ Տօքթ. եւ Տիկին  
Արթօ եւ Սօնա ՏԵՄԻՐՃԵԱՆՆԵՐԸ, որոնք սիրայօժար կերպով ստանձնած էին  
մեր այս տարուայ Պազարին օրուան նախագահութիւնը: Տեր Հայրը յատուկ  
գնահատանքով արժեւորեց անոնց տարիներու ծառայութեան վաստակը,





որոնք անհատնում կերպով իրենց նպաստը բերած են ու կը շարունակեն բերել Եկեղեցւոյ զանազան կարիքներուն: Ապա, Տէր Հայրը բոլորին կողմէ իր սրտագին շնորհակալական խօսքը ուղղեց անոնց եւ դրուատեց անոնց պատուարժան ներկայութիւնը մեր Եկեղեցւոյ անդաստանէն ներս, որ կ'ոգեւորէ մեզ բոլորս անխտիր, որուն համար երախտապարտենք բոլորս: Ուստի, ան իր խօսքը փոխանցեց օրուան Պատւոյ հիւր` Տօքթ. Արթօ ՏԵՄԻՐՃԵԱՆԻՆ: Տօքթ. ՏԵՄԻՐՃԵԱՆ իր կարգին նախ գնահատեց Տիկնանց Յանձնախումբի Ատենապետուհի` Տիկին Չուարթ Թագւորեանին, որուն գործօն եւ աշխոյժ մտայղացումներով իրականացաւ այս բացառիկ օրը: Տօքթ. ՏԵՄԻՐՃԵԱՆ ակնարկեց օրուան հետաքրքրական շարժանիքին, թէ՛ այս անգամ իրենց



առանցնաշնորհուած էր ստանձնելու 2017 տարեշրջանի Պագարին նշանակալից Պատւոյ Նախագահութիւնը: Ապա, Պատւոյ Նախագահուհի` ազնուափայլ Տիկին Սօնա ՏԵՄԻՐՃԵԱՆ կատարեց Պագարի պաշտօնական բացման ժապաւենի հատումը:

Երկու օրերուն Պագարի վաճառքը շարունակուեցաւ «Մարի Մանուկեան» սրահէն ներս, իր ճոխ Հայկական ճաշատեսակներով, խմորեղէններու, անուշեղէններու բազմաթիւ եւ ինքնատիպ տեսականիով, եւ այլազան տնային իրեղէններու եւ հագուստեղէնի վաճառքով:



Այս առիթով մեր խորին շնորհակալութիւնը նաեւ` Տէր եւ Տիկին Շահան եւ Աշխէն Կազերեանին եւ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Անուշ Գազանին, որոնք ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ստանձնեցին Պագարի Շաբաթ օրուան կէսօրուայ համեղ ճաշի պատրաստութիւնն ու սպասարկութիւնը: Իսկ Պագարի Կիրակի օրուան կէսօրուայ համադամ ճաշի պատրաստութիւնն ու սպասարկութիւնը ստանձնեց Տիկնանց Յանձնախումբը, որուն համար մեծապէս շնորհակալութիւն կը յայտնենք բոլորին: Շնորհակալութիւն եւ վարձքը կատար բոլորին:







# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

**St. Gregory the Illuminator Armenian Cathedral**

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

# SUNDAY SCHOOL

**On Sunday, September 10, 2017**

**For the ages of 6-12 years old children**

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



**In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.**

**Fun & fascinating consecutive Fieldtrips**

**For more information and registration call to the Church office (514) 279-3066**

**Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347  
E-Mail: [secretary@saintgregory.ca](mailto:secretary@saintgregory.ca), [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)  
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



# ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

## **Ս. Գրիգոր Լուսալորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ**

**Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը**

**Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց  
պատրաստութեան  
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,  
որոնք կը փափաքին ծառայել  
Հայց. Առաք. Եկեղեցույ Սուրբ Խորանին եւ մաս կազմել  
Ս. Գրիգոր Լուսալորիչ Եկեղեցույ Դպրաց Դասին կը  
խնդրենք**

**հեռաձայնել՝ Եկեղեցույ Հովիւին (514) 241 -9347  
Կամ Եկեղեցույ գրասենեակ՝ (514)279-3066:**

**Հոգեւոր Հովիւ  
Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան**

# ՄԱՅՐ ՏԱԾԱՐ





# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



## ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի  
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,  
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն  
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ  
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն  
ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ  
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող  
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347




## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

### CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.